ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն,քաղաք Գավառ
Երկու հազար տասնմեկ թվականի օգոստոսի չորսին 04.08.2011թ

«ԱՐԱ-ՆԱՆԵ»սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,իրավաբանական հասցեն ք.Գավառ,Զորավար Անդրանիկի 20/քսան/ի դեմս տնօրեն Արտակ Սամվելի Զանգեզուրյանի,հաշվառված ք.Գավառ,Միքայելյան 19/տասնինը/,անձնագիր AE0523464,տրված 040,11.07.2000թ.,վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 11.07.2015թ.,որը գործում է համաձայն կանոնադրության,այսուհետ «Վարձատու»մի կողմից,և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը,իրավաբանական հասցեն ք.Երևան,Նալբանդյան փողոց թիվ 13/տասներեք/,ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Ն.Մինասյանի,որի անունից համաձայն 12.07.2011թ/երկու հազար տասնմեկ թվականի հուլիսի տասներկուսին/ տրված թիվ 1-11/3-3-1/5693-11 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Ավետիք Մերուժանի Բաղդասարյանը,հաշվառված ք.Գավառ,Ազատության փ.շ.40/քառասուն/,բն.32/երեսուներկու/,անձնագիր AK0623888,տրված 040, 23.09.2010թ.,այսուհետ «Վարձակալ» մյուս կողմից,կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

3. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշել են 04.09.2006թ./երկու հազար վեց թվականի սեպտեմբերի չորսին/ կնքված և ՀՀ Գավառ նոտարական տարածքի նոտարի կողմից 04.09.2006թ./երկու հազար վեց թվականի սեպտեմբերի չորսին/ վավերացված ք.Գավառ,Զորավար Անդրանիկի 20/քսան/հասցեում գտնվող անշարժ գույքի գրանցում թիվ 2300 վարձակալության պայմանագրում, այսուհետ՝ Պայմանագիր, կատարել հետևյալ փոփոխությունը .

1.1.1. Պայմանագրի 5.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Գույքի վարձակալության ժամկետն սկսվում է 01.08.2006թ/երկու հազար վեց թվականի օգոստոսի մեկից/ 10/տաս/ տարի ժամկետով մինչև 01.08.2016թ/երկու հազար տասնվեց թվականի օգոստոսի մեկը/ :

1.1.2.Պայմանագրի նախկին 5.1-րդ կետը համարել ուժը կորցրած :

1.1.3.Պայմանագրի մնացած կետերը թողնել անփոփոխ :

2.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1 2.1.Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու,նոտարական կարգով վավերացնելու պահից , պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման պահից:

2.2.Կողմերի միջև ձեռք բերված՝սույն Համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել :

2.3.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն Համաձայնագիրը :

3.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1.Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությամբ,գրավոր մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով,որը ենթակա է նոտարական վավերացման :

3.2.Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան :

3.3.Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից պայմանագրի անբաժանելի մասն է :

3.4.Սույն համաձայնագրի,ինչպես նաև պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով :Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը :

3.5. Սույն համաձայնագիրը կազմված է 4 /չորս/ օրինակից, հայերեն լեզվով,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ յուրաքանչյուր կողմին՝ տրվում է մեկական օրինակ:Առաջին օրինակը պահվում է Գավառ նոտարական տարածքի գրասենյակում: Օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին,որը համարվում է պայմանագրի բնօրինակը:

Մենք «Կողմերս» լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առնչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ծեռնտու են: Պայմանագրի բոլոր դրույթները բխում են մեր կողմերիս իրավական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտությամբ:

ՎԱՐՁԱՏՈՒ

«ԱՐԱ-ՆԱՆԵ»սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն
իրավաբանական հասցեն ք.Գավառ,Զորավար Անդրանիկի 20
ՀՎՀՀ 08405125
տնօրեն
Արտակ Սամվելի Զանգեզուրյան
հաշվառված ք.Գավառ,Միքայելյան 19
անձնագիր AE0523464,տրված 040,11.07.2000թ.

Արտակ Սամվելի Զանգեզուրյան

ՎԱՐՁԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության սոցիալական ապահովության պետական
ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ
իրավաբանական հասցեն ք.Երևան,Նալբանդյան փողոց թիվ 13
ծառայության աշխատակազմի ղեկավար Ն.Մինասյան
լիազորված անձ
Ծառայության Գավառի սոցիալական ապահովության
տարածքային բաժնի պետ
Ավետիք Մերուժանի Բաղդասարյան
հաշվառված ք.Գավառ,Ազատության փ.շ.40,բն.32,
անձնագիր AK0623888,տրված 040, 23.09.2010թ.

Ավետիք Մերուժանի Բաղդասարյան

Հայաստանի Հանրապետության անունից
04.08.2011թ. երկու հազար տասնմեկ թվականի օգոստոսի չորսին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Գավառ նոտարական տարածքի նոտար Տարոն Գրիգորյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը,նրանց գործունակությունը ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 1559
Գանձված է պետական տուրք և նոտարական ծառայության վճար
համաձայն ՀՀ «Պետական տուրքի» և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար